Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2025-2026 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՆՑԱԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021101.02.6 «ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է: Շրջանավարտը ստանում է արվեստագիտության բակալավրի որակավորում:

Դիմորդները մասնագիտական քննություն են հանձնում հետևյալ առարկաներից.

1-ին քննություն՝ «Օպերատորության հիմունքներ» (ՕՊՀ) (բանավոր)

Տեսաօպերատորական բաժնում քննություն հանձնելու համար դիմորդից պահանջվում են լուսանկարչական և տեսաօպերատորական տեխնիկայի վերաբերյալ տեսական և պրակտիկ գիտելիքներ (օպտիկա, բնական և արհեստական լույս, ֆոտոկոմպոզիցիա):

Դիմորդը պետք է ներկայացնի լուսանկարչական ալբոմ-հավաքածու՝ իր լուսանկարներով (20 լուսանկար՝ 13x18 կամ 15x21 չափսի), այդ լուսանկարների էլեկտրոնային տարբերակները սկավառակի վրա և 5-15 րոպեանոց տեսաֆիլմ կամ ֆոտոֆիլմ՝ միաժամանակ պատասխանելով առաջադրված հարցերին:

Դիմորդը պատասխանում է նաև քննատոմսի հարցերին, որից երրորդը վերաբերում է իր ներկայացրած աշխատանքներից 2-3-ի տեխնիկական վերլուծությանը:

2-րդ քննություն՝ «Մասնագիտական հարցազրույց» (ՄՀ) (բանավոր)

Քննությունն ընդունվում է երկու փուլով.

1. Դիմորդը ներկայացնում է իր կողմից նկարահանված ֆոտոալբոմը և ֆոտոֆիլմը /տեսաֆիլմ/, որտեղ պետք է դրսևորվեն նրա ճաշակը, իմացությունը կադրի, կոմպոզիցիայի լույսի /բնական, արհեստական/, գույնի և սյուժեի վերաբերյալ:
2. Ստուգվում է դիմորդի ինտելեկտը, նրա իմացությունը քաղաքի պատմաճարտարապետական հուշարձանների, կինոարվեստի, այդ թվում վարպետ օպերատորների մասին: Դիմորդը բանավոր հարցազրույցի ժամանակ գիտելիքներ պետք է ցուցաբերի արվեստի այլ ճյուղերի /լուսանկարչություն, թատրոն, հեռուսատեսություն, երաժշտություն, ճարտարապետություն, գրականություն/ վերաբերյալ:

Մասնագիտական գրականության
ցանկ.

1. Л. П. Дыко, А. Головня "Фотокомпозиция"-Москва "Искусство" 1962 г.
2. Р. Ильин "Фотография при естественном освещении" – Москва "Искусства" 1960 г.
3. А. Симонов "Фотография при искусственном освещении" – Москва "Искусство" 1960 г.
4. «Հայկական Սովետական հանարագիտարան» (հոդվածներ կինոգործիչների, թատրոնի, երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության մասին):
5. "Киноэнциклопедический слобарь" Москва "Советская энцилопедиять 1986 г. Главный редактор С. И. Юткевич".
6. Д. Килпатрик. Свет и освещение, изд. ,,Мир,, , Москва, 1988г.
7. Р. Хеймен. Светофильтры, изд. ,,Мир,, , Москва, 1988г.
8. И.А.Головня. С чего начиналась фотография, изд.,,Знание,, , Москва, 1991г..
9. Վ. Քոչար, Հայ լուսանկարիչներ, Երևան, 2007:
10. «Հայկական Սովետական հանրագիտարան», հոդվածներ կինոռեժիսորների, օպերատորների, նկարիչների, լուսանկարիչների, երաժիշտների, թատրոնի և թատերական գործիչների մասին:
11. Ա. Առաքելյան, Լուսանկարչություն, Երևան, «Հայպետհրատ», 1959:
12. «Ֆիզիկա» դասագիրք, (օպտիկայի բաժին):

021101.02.6 «ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1-ին քննություն -«Օպերատորության հիմունքներ» (ՕՊՀ) (բանավոր)

1-7 միավոր ստանում է այն դիմորդը, որի պատասխանը և ներկայացրած ալբոմ-հավաքածուն չի համապատասխանում առաջադրված պահանջներին. բացակայում են լուսանկարների նեգատիվները, չկա ֆոտո կամ տեսաֆիլմ:

8-12 միավոր ստանում է այն դիմորդը, որը հանդես է բերում տարրական իմացություն լուսանկարչական խցիկի կառուցվածքի, օպտիկայի և տեսանկարահանմանն աջակցող տեխնիկական սարքերի վերաբերյալ:

13-17 միավոր ստանում է այն դիմորդը, որը, բացի վերը նշված գիտելիքներից, տիրապետում է կոմպոզիցիայի, գույնի, լույսի, պատկերի հեռանկարի իմացությանը:

18-20 միավոր ստանում է այն դիմորդը, որը, այս բոլոր գիտելիքների իմացությունից բացի, ունի ստեղծագործական վառ երևակայություն, պատկերացում, յուրահատուկ ընկալում և արտակարգ մեկնաբանություն:

2-րդ քննություն -«Մասնագիտական հարցազրույց» (ՄՀ) (Կոլոքվիում) (բանավոր)

1-7 միավոր ստանում է այն դիմորդը, որը չունի լուսանկարչական ալբոմ /ֆոտոֆիլմ/ և որի

պատասխանը արվեստների վերաբերյալ առաջադրված բանավոր հարցերին անբավարար են:

8-12 միավոր ստանում է այն դիմորդը, որը բավարար գիտելիքներ է հանդես բերում առաջադրված հարցերի վերաբերյալ, և որի կողմից ներկայացված պատկերների մեկնաբանությունը ընդունելի է պահանջների շրջանակում:

13-17 միավոր ստանում է այն դիմորդը, որի ներկայացրած լուսանկարները և տեսանյութերը հետաքրքիր են, կարողանում է այն ճիշտ մեկնաբանել, առաջադրված հարցերին պատասխանելիս հանդես է բերում առարկայի լավ իմացություն:

18-20 միավոր ստանում է այն դիմորդը, որի ներկայացված լուսանկարները և տեսանյութերը բացառիկ են, ունեն գերազանց կատարողական և համապատասխան բանավոր մեկնաբանություն: Պատասխանելով առաջադրված հարցերին՝ դիմորդը հանդես է բերում բացառիկ գիտելիքներ, ունի պատկերացում արվեստների պատմության և արդի մշակույթի մասին:

021101.02.6 «ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1-ին քննություն -«Օպերատորության հիմունքներ» (ՕՊՀ) (բանավոր)

Քննությանը թույլատրվում են այն դիմորդները, որոնք ներկայացնում են ծրագրային պահանջներին բավարարող ֆոտոալբոմ-հավաքածու նեգատիվներով՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Քննությունը հարցատոմսերով է, որոնք պարունակում են երկու հարց: Քննատոմսի երրորդ հարցը տրվում է քննողի կողմից և վերաբերում է դիմորդի ներկայացրած որոշ լուսանկարների վերլուծությանը:

2-րդ քննություն - «Մասնագիտական հարցազրույց» (ՄՀ) (կոլոքվիում) (բանավոր)

Ուսումնասիրվում և քննվում է դիմորդի կողմից ներկայացված ֆոտո-տեսաֆիլմը, ստուգվում են դիմորդի ստեղծագործական կարողությունները և մասնագիտական հարցերի ինքնուրույն մեկնաբանման մակարդակը, իմացությունը արվեստների մասին:

Քննությունն ընթանում է հարցազրույցի կարգով, արդյունքները գնահատվում են մեկ ընդհանուր գնահատականով՝ առանց կլորացման: